ԱՐԴԱՐ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ COVID-19 ՀԱՄԱՃԱՐԱԿԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

COVID-19 համաճարակի պայմաններում բազմաթիվ երկրներ ստիպված էին, ի թիվս այլ ոլորտների, շտկումներ մտցնել նաև դատական համակարգի գործունեության մեջ: Շատ երկրներում, այդ թվում Հայաստանում, դատարանները սկսեցին հետաձգել «ոչ հրատապ» դատական նիստերը, ինչպես նաև ձեռնամուխ եղան վարույթները իրականացնել հեռավար՝ տեսակապի կիրառմամբ: Վերջին միջոցը կարծես լավագույն լուծումն է համաճարակի պայմաններում արդար դատաքննության, դատարանի մատչելիության և արդյունավետ պաշտպանության միջոցի իրավունքների զանգվածային խախտումներից խուսափելու համար: Սակայն դրա պիտանելիությունը պետք է որոշվի յուրաքանչյուր կոնկրետ դեպքում, հատկապես քրեական վարույթներով, քանի որ կան հանգամանքներ, երբ ֆիզիկական մասնակցությամբ դատական նիստերն անփոխարինելի են (օրինակ՝ իրեղեն ապացույցների հետազոտման դեպքում): Միաժամանակ անչափ կարևոր է, որ դատական լսումները և նախնական վարույթները հեռավար կարգով իրականացնելու ցանկացած որոշում ուղեկցվի համապատասխան գործուն երաշխիքներով՝ պաշտպանելու համար դատավարության մասնակիցների արդար դատաքննության իրավունքը:

Անհրաժեշտ են գործուն մեխանիզմներ երաշխավորելու հատկապես.

- ✓ իրավաբանական օգնության իրավունքը՝ կոնֆիդենցիալության պահպանման պայմաններում փաստաբանի հետ հեռահաղորդակցվելու հնարավորությունը՝ այդ թվում դատական նիստերի (քննչական գործողությունների) ընթացքում և ազատազրկման վայրերից.
- ✓ գործի նյութերի հասանելիությունը դատավարության կողմերին, փաստաբաններին և այնքանով, որքանով հնարավոր է, հնարավորություն հեռավար կարգով ներկայացնել և հետազոտել ապացույցներ (օրինակ գրավոր ապացույցներ, տեսանյութեր և այլն).
- ✓ տեսակապի միջոցով դատավարությանը մասնակցող բոլոր անձանց հետևելու հնարավորություն.
- ✓ թարգմանություն՝ նման կարիք ունեցող դատավարության մասնակիցների համար (հատկապես ամբաստանյալի):

ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԸ ՀԵՌԱՎԱՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքները երաշխավորված են Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներով և ենթակա չեն սահմանափակման կամ կասեցման արտակարգ դրության ժամանակ (Սահմանադրության 76-րդ հոդված)[1]: «Արտակարգ դրության իրավական ռեժիմի

[1] Մանրամասն տես՝ ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում Հոդ. 1118:

մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածով սահմանվել է, որ արտակարգ դրության ժամանակ նախատեսված միջոցառումների իրականացումը չի կարող խոչընդոտել դատարանների բնականոն գործունեությունը [2]:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքն ըստ էության չի նախատեսում հեռավար դատավարության ընթացակարգ, փոխարենը օրենսգրքի 145-րդ հոդվածով կարգավորվում է բացառապես դատավարության առանձին մասնակիցի՝ պատճառաբանված միջնորդության հիման վրա մասնակցությունը դատական նիստին տեսաձայնային հեռահաղորդակցության միջոցների կիրառմամբ՝ դատական հանձնարարությունն ստացած դատարանի աշխատակազմի միջոցով: Այլ կերպ ասած, կարգավորվում է դատավարության մասնակցի հեռավար մասնակցությունը դատական նիստին՝ իր գտնվելու վայրի դատարանի միջոցով, այդ դատարանից: Օրենսգրքով չի սահմանվել նաև տեսաձայնային հեռահաղորդակցության միջոցների կիրառմամբ անցկացվող նիստի ընթացքում համապատասխան փաստաթղթերի, ապացույցների ներկայացման/ծանոթացման հնարավորությունը:

ՀՀ քրեական դատարավարության օրենսգիրքը նույնպես չի նախատեսում դատավարության մասնակիցների մասնակցություն պահանջող քննչական/դատավարական գործողությունները տեսակապի միջոցով իրականացնելու, ինչպես նաև դատավարության մասնակիցների՝ դատական նիստին տեսաձայնային հեռահաղորդակցության միջոցների կիրառմամբ մասնակցելու ընթացակարգ: Բացառություն է կազմում միայն վկայի և տուժողի հարցաքննությունը նախաքննության փուլում, այն էլ՝ նրանց գտնվելու վայրի նախաքննության կամ հետաքննության մարմնի (արտասահմանում ՀՀ դիվանագիտական ծառայության մարմնի միջոցով) օժանդակությամբ, դրանց աշխատակցի ներկայությամբ (հոդվածներ 209.1 և 209.2)[3]:

ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքն առհասարակ չի նախատեսում դատական նիստերի հեռավար անցկացման կամ տեսակապի միջոցով վկայի հարցաքննության հնարավորություն:

Հատկանշական է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում ներդրված տրամաբանությամբ են կարգավորված նաև տեսաձայնային հեռահաղորդակցության միջոցների կիրառմամբ դատական նիստերի անցկացմանն առնչվող որոշ այլ երկրների դատավարական օրենսդրությունները: Այսպես օրինակ, նիստը հեռավար է անցկացվում, երբ անձը օբյեկտիվ պատճառներով չի կարող ներկա գտնվել դատական նիստին (Ռուսաստանի Դաշնություն), կամ համապատասխան անձը

---

[2] Մանրամասն տես՝ ՀՀՊՏ 2012.04.25/21(895) Հոդ.473:

[3] Քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծով զգալիորեն ընդլայնվում է հեռավար դատավարության ընթացակարգերի կիրառումը, մասնավորապես՝ նախատեսվում է դատարանում պաշտպանվող անձի տեսակապի միջոցով հարցաքննության կարգ, քննչական գործողությունները ընդհանուր կարգով կատարելու անհնարինության դեպքում տեսակապի միջոցով կատարելու հնարավորություն, ինչպես նաև դատարանում անձանց հեռավար հարցաքննության հնարավորություն այն դեպքերում, երբ հարցաքննության ենթակա անձի ներկայությունը դատարանում անհնար է կամ կարող է սպառնալ նրա անվտանգությանը կամ վտանգել ցուցմունքի արժանահավատությունը, կամ երբ առկա է անչափահաս տուժողի կամ վկայի իրավաչափ շահերի պաշտպանության անհրաժեշտություն:

երկրում չի գտնվում, պատիժ է կրում քրեակատարողական հիմնարկում, հոսպիտալացվել է որևէ բժշկական հաստատություն կամ ունի մկանային-կմախքային համակարգի խախտումներ (Մոլդովայի Հանրապետություն): Ավելին, ի տարբերություն Հայաստանի Հանրապետության օրենսդրության, մատնանշված երկրներում տեսաձայնային հեռահաղորդակցության միջոցների կիրառմամբ դատական նիստը կարող է կազմակերպվել ոչ միայն համապատասխան վայրի դատարանի, այլ նաև դիվանագիտական ներկայացուցչության կամ հյուպատոսական հիմնարկի տարածքում, քրեակատարողական հիմնարկում, բժշկական հաստատության կամ սոցիալական ապահովության գործակալության, խնամակալության գործակալության կամ փորձաքննության մարմնի միջոցով, եթե նշված հիմնարկներն ունեն համապատասխան տեխնիկական միջոցներ և կարող են ստուգել մասնակցի ինքնությունը:

Ի տարբերություն վերոգրյալ երկրների, Ուկրաինայի քաղաքացիական և վարչական դատավարության օրենսգրքերում 30.03.2020թ. փոփոխություններով սահմանվեց կորոնավիրուսային հիվանդության տարածումը (COVID-19) կանխելու նպատակով Ուկրաինայի Նախարարների կաբինետի կողմից հաստատված կարանտինի ընթացքում գործի մասնակիցների՝ դատական նիստերի դահլիճից դուրս դատական նիստին մասնակցելու հնարավորությունը: Մասնավորապես, սահմանվեց, որ գործի մասնակիցները կարող են դատական նիստին մասնակցել դատական նիստերի դահլիճից դուրս՝ օգտագործելով իրենց տեխնիկական միջոցները: Գործում մասնակցի ինքնության ստուգումը կատարվում է էլեկտրոնային ստորագրությամբ, և եթե անձը չունի այդպիսի ստորագրություն, ապա Ուկրաինայի «Օրենքի մասին միասնական պետական ժողովրդագրական ռեգիստրի և Ուկրաինայի քաղաքացիությունը հաստատող փաստաթղթերի, անձի կամ նրա հատուկ կարգավիճակի մասին» կամ Ուկրաինայի պետական դատական մարմնի կողմից սահմանված կարգով:

Վրաստանի քաղաքացիական դատավարության օրենսգիրքը հստակ սահմանում է այն դեպքերը, երբ հնարավոր է իրականացնել հեռավար քննություն: Այսպես, նախնական դատական նիստերը կարող են անցկացվել հեռախոսի կամ վիդեոկոնֆերանսի միջոցով, եթե դատարանը ստանալով փաստաթղթերը հիմքեր ունի կարծելու, որ կողմերը կարող են հաշտության գալ, պատասխանողն ընդունում է հայցադիմումի պահանջները, կամ հայցվորը կարող է հրաժարվել հայցից, ինչպես նաև դատարանը գտնում է, որ հեռախոսի կամ վիդեոկոնֆերանսի միջոցով դատական գործը պատշաճ ձևով կարող է նախապատրաստվել: Նույն օրենսգրքի 207-րդ հոդվածով նախատեսվում է, որ հիմնական դատական նիստը, ինչպես նաև դատական ակտի եզրափակիչ մասը կարող է հրապարակվել վիդեոկոնֆերանսի միջոցով, եթե առկա է կողմերի համաձայնությունը[4]:

ԱՄՆ-ում ևս ապահովվել է դատական նիստերի հեռավար անցկացման հնարավորությունը՝ Zoom համակարգի միջոցով[5]:

Տեսակապի միջոցով դատական նիստերի անցկացման հնարավորությունը ներդրվել է բազմաթիվ եվրոպական երկրներում (Ֆրանսիա, Միացյալ

---

[4] Մանրամասն տես՝ Civil procedure code of Georgia https://matsne.gov.ge/en/document/download/29962/92/en/pdf

[5] http://www.jud12.flcourts.org/Public-Information/Public-Court-Hearings#:~:text=JUDGES%20CONDUCTING%20HEARINGS%20USING%20REMOTE%20TECHNOLOGY&text=The%20Zoom%20platform%20allows%20individuals,hearing%20via%20the%20Zoom%20platform.

Թագավորություն, Իռլանդիա, Նիդերլանդներ, Իսպանիա և այլն): Ընդ որում, այդ հնարավորությունը հետզհետե տարբեր ասպեկտներով ընդլայնվում է՝ Ֆրանսիայում, օրինակ, տեսակապի միջոցով դատական նիստերը կարող են անցկացվել նույնիսկ առանց կողմերի համաձայնության (նույն կարգավորմամբ օրենքի նախագիծ է հրապարակվել նաև Գերմանիայում[6]), իսկ Նիդերլանդներում վերացվել է նախկինում գործող սահմանափակումը՝ անչափահասների, հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց գործերով լսումները տեսակապի միջոցով չանցկացնելու վերաբերյալ:

ԲԴԽ-12-Ո-25 ՈՐՈՇՄԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ի ապահովումն Պարետի 2020 թ. մարտի 24-ի թիվ 15 որոշման՝ Բարձրագույն դատական խորհրդի 24.03.2020թ. թիվ ԲԴԽ-12-Ո-25 որոշմամբ սահմանվել է, որ Հայաստանի Հանրապետության բոլոր դատարաններում տեսաձայնային հաղորդակցության հնարավորությունն ապահովող համակարգի ներդրման միջոցով դատական նիստերի մեկնարկը հայտարարվելուն պես, դատավարության մասնակիցների համաձայնությամբ, դատական նիստերը պետք է իրականացնել հեռավար/առցանց՝ բոլոր հասանելի էլեկտրոնային հավելվածների կիրառման միջոցով[7]: Միաժամանակ, Դատական դեպարտամենտի ղեկավարին, ի թիվս այլնի, հանձնարարվել է Դատական կարգադրիչների ծառայության միջոցով արգելել ՀՀ դատարանների վարչական շենքեր մուտք գործել բոլոր այն անձանց, ովքեր չեն հանդիսանում տվյալ օրը կոնկրետ դատարանում նախապես նշանակված դատական նիստերով դատավարության մասնակիցներ (ներկայացուցիչներ): Որոշման համաձայն՝ ՀՀ դատարաններին հասցեագրված ցանկացած փաստաթուղթ ընդունվելու է էլեկտրոնային եղանակով, իսկ ՀՀ դատավորներին առաջարկվել է ընդունել էլեկտրոնային եղանակով ստացված փաստաթղթերը՝ հետագայում, ըստ անհրաժեշտության, դրանց բնօրինակները պահանջելու պայմանով: Առաջարկվել է նաև ՀՀ դատավորներին և դատավարության մասնակիցներին, նախապես համաձայնեցնելով, հետաձգել բոլոր դատական նիստերը՝ բացառությամբ անհապաղ քննության ենթակա գործերի[8]:

Բարձրագույն դատական խորհրդի 24.03.2020թ. թիվ ԲԴԽ-12-Ո-25 որոշմամբ, թեև փորձ է կատարվել մասնակիորեն կարգավորել հեռավար դատավարության ընթացակարգը, սակայն գործնականում դրա կիրառումը՝ օրենսդրական համապատասխան կարգավորումների պայմաններում կարող է առաջացնել խնդիրներ: Մասնավորապես, որոշման կարգավորումները, հատկապես կապված տեսակապի միջոցով դատավարության մասնակիցների մասնակցության ապահովման հետ, չեն բխում դատավարական օրենսգրքերից, ինչը հետագայում կարող է դատավարության օրինականությունը վիճարկելու (դատավարական

---

[6] https://www.fairtrials.org/news/short-update-draft-law-remote-criminal-proceedings-germany-draws-criticism-judges

[7] Դատական դեպարտամենտի կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ դատական նիստերի հեռավար անցկացման համար կարող են օգտագործվել Skipe, Zoom և այլ նմանատիպ հավելվածներ: Ինչ վերաբերում է միասնական տեղեկատվական հարթակի վերաբերյալ հարցին, ապա տեղեկացվել է, որ ներկայումս բացակայում է այն ստեղծելու իրավական հիմքը:

[8] Մանրամասն տես՝ http://court.am/hy/decisions-single/530:

խախտում) հիմք հանդիսանալ կողմերի համար: Միաժամանակ, ինչպես նշվեց, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքները ենթակա չեն սահմանափակման կամ կասեցման արտակարգ դրության ժամանակ: Այնուամենայնիվ, ԲԴԽ որոշմամբ սահմանափակվել է դատական վարույթի հրապարակայնության սկզբունքը և որևէ միջոց չի ձեռնարկվել տեսաձայնային հեռահաղորդակցության միջոցների կիրառմամբ անցկացվող դատական նիստերը հանրության համար հասանելի դարձնելու ուղղությամբ[9]: Մինչդեռ, հրապարակայնության սկզբունքը թե՛ Սահմանադրության, թե՛ միջազգային իրավական ակտերի, թե՛ դատավարական օրենսդրության շրջանակներում դատավարական իրավունքների իրացման կարևորագույն և անխախտելի սկզբունք է[10]: «Դատավարության հրապարակայնությունն առաջին հերթին նշանակում է հասարակական վերահսկողության իրականացման հնարավորություն դատավարության և դատարանի ընդունած ակտերի նկատմամբ[11]»: Հենց մատնանշված հանգամանքներով է պայմանավորված համաճարակի պայմաններում այլ երկրներում հրապարակայնության սկզբունքի ապահովման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումները և ձևավորված պրակտիկան:

Այս առումով օրինակելի է Մեծ Բրիտանիայի փորձը, որտեղ սահմանվել է հեռավար եղանակով գործերի քննության կարգ: Մասնավորապես, Մեծ Բրիտանիան ընդունել է Անգլիայում և Ուելսում Քաղաքացիական գործերով հեռավար լսումների արձանագրությունը՝ սահմանելով հավելվածներ, որոնցով և իրականացվում է դատական նիստերի լսումները, համապատասխան փաստաթղթերի փոխանցումը և ապացույցների տրամադրումը: Ընդ որում, մատնանշված արձանագրությամբ հատուկ շեշտադրվում է հեռավար կարգով նիստերի անցկացման դեպքում հրապարակայնության սկզբունքի պահպանման անհրաժեշտությունն ու առաջնային կարևորությունը: Նույն փաստաթղթով սահմանվել են նաև հրապարակայնության սկզբունքի պահպանման համար մի շարք եղանակներ, այն է՝ ա/ հեռավար նիստի ընթացքը դատական դահլիճում լսելի դարձնելու, բ/ զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչների մուտքը հեռավար կարգով կազմակերպվող նիստին թույլատրելու, գ/ օրենքով սահմանված կարգով համացանցի միջոցով ուղիղ հեռարձակում կազմակերպելու միջոցով[12]: Նախատեսվում է նաև, որ

---

[9] Հեռավար եղանակով անցկացվող դատական նիստերի հրապարակային քննությունն ապահովելու հետ կապված հարցադրումների վերաբերյալ Դատական դեպարտամենտը դիրքորոշում է հայտնել առ այն, որ դատական վարույթի հրապարակայնության սկզբունքը բացարձակ բնույթ չի կրում, և դրա սահմանափակումը կհետապնդի իրավաչափ նպատակ, եթե այն պայմանավորված է հանրային շահով. տվյալ դեպքում կիրառված սահմանափակումը բացառապես նպատակ է հետապնդում կանխարգելել նոր կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) հետագա տարածումը դատական համակարգի աշխատակիցների շրջանակում, և առհասարակ: Միաժամանակ նշվել է, որ այդ սահմանափակումը չի վերաբերում դատական վարույթի ելքով իրավական շահագրգռվածություն ունեցող անձանց՝ դատավարության մասնակիցներին, իսկ քննարկվող իրողության պայմաններում դատավարության մասնակից չհանդիսացող անձանց կիրառվող սահմանափակումը չի կարող որևէ կերպ բնորոշվել որպես դատական վարույթի հրապարակայնության սկզբունքի ոչ իրավաչափ սահմանափակում: Ըստ Դատական դեպարտամենտի՝ դատավարության մասնակից չհանդիսացող անձինք դատական գործերի ընթացքին կարող են ծանոթանալ www.datalex.am ինտերնետային կայք էջից:

[10] Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 02.04.2019 թ. թիվ ՍԴՈ-1452 որոշումը

[11] Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 11.04.2012թ. թիվ ՍԴՈ-1020 որոշումը

[12] Մանրամասն տես՝ CIVIL JUSTICE IN ENGLAND and WALES PROTOCOL REGARDING REMOTE HEARINGS, https://www.judiciary.uk/wp-content/uploads/2020/03/Remote-hearings.Protocol.Civil_.GenerallyApplicableVersion.f-amend-24_03_20-1.pdf: Միաժամանակ, հարկ է նշել, որ ոչ բոլոր գործերով է կիրառվում այս կարգը և շեշտվում է,

դատավարության կողմերը անհրաժեշտության դեպքում պետք է սահմանված կարգով նախապատրաստեն փաստաթղթերի էլեկտրոնային փաթեթ, որը պետք է ներկայացնել դատարան և դատավարության կողմերին: Ընդ որում սահմանված է, որ ի թիվս այլ եղանակների, էլեկտրոնային փաթեթը կարող է ուղարկվել էլեկտրոնային փոստով[13]:

Հատկանշական է նաև Ուկրաինայի քաղաքացիական և վարչական դատավարության օրենսդրությունը, որով սահմանվել է դատական նիստի ընթացքի՝ համացանցով հեռարձակման պարտադիր պայման, եթե գործի բոլոր մասնակիցները դատական նիստին մասնակցում են տեսաձայնային հեռահաղորդակցության միջոցների կիրառման ռեժիմով:
Ֆրանսիայում հեռավար դատական նիստերի հրապարակայնությունը ապահովվում է կամ տեսակապի միջոցով կամ դատական նիստին սահմանափակ թվով անձանց կամ ԶԼՄ ներկայացուցիչների ներկայությունը թույլատրելու միջոցով:
ԱՄՆ որոշ նահանգներում ևս ապահովվել է դատական նիստերի հեռավար հեռարձակումը՝ հանրությանը հնարավորություն տալով միանալ դատական տեսակոնֆերանսներին (Կալիֆորնիա, Ֆլորիդա):

Ինչ վերաբերում է ՀՀ դատարաններին հասցեագրված ցանկացած փաստաթուղթ էլեկտրոնային եղանակով ընդունելուն, ինչպես նաև ՀՀ դատավորներին՝ էլեկտրոնային եղանակով ստացված փաստաթղթերն ընդունելու առաջարկին (հետագայում, ըստ անհրաժեշտության, դրանց բնօրինակները պահանջելու պայմանով), ապա հարկ է նշել, որ որոշ փաստաբանների մոտ խնդիրներ են առաջացել էլեկտրոնային եղանակով փաստաթղթերի ներկայացման առնչությամբ: Այս կապակցությամբ Դատական դեպարտամենտից տեղեկացրել են, որ փաստաբանների կողմից ներկայացվող դիմումները մանրամասն ուսումնասիրվում են, վեր են հանվում դրանցով ներկայացված խնդիրներն ու առաջարկությունները, իսկ որոշ դեպքերում, ելնելով դիմումներով բարձրացված հարցերի առանձնահատկություններից, դրանք վերահասցեագրվում են ՀՀ դատարաններին: Միաժամանակ տեղեկացվել է, որ էլեկտրոնային փոստի միջոցով փաստաթղթաշրջանառությունն իրականացվում է դատավարական օրենսգրքերի պահանջներին համապատասխան՝ ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 2007 թվականի դեկտեմբերի 21-ի «ՀՀ դատարանների գործավարության կանոնները հաստատելու մասին» թիվ 23Լ որոշմամբ սահմանված կարգով և ներկայումս մշակման փուլում է գտնվում «Դատարան փաստաթղթերի հանձնման, ըստ տեսակների՝ գործերի դասակարգման և դատարանների գործավարության այլ կանոնները հաստատելու մասին» Բարձրագույն դատական խորհրդի որոշման նախագիծը:

որ քննությունը նման կարգով չպետք է լինի ինքնանպատակ ու հանգեցնի խախտումների. անհրաժեշտ է պահպանել դատական նիստին ներկա լինելու, փաստաբանի հետ շփման գաղնիության ապահովման և դատավարության անցկացման հետ կապված այլ սկզբունքներ:

[13] Մանրամասն տես՝ CIVIL JUSTICE IN ENGLAND and WALES PROTOCOL REGARDING REMOTE HEARINGS, https://www.judiciary.uk/wp-content/uploads/2020/03/Remote-hearings.Protocol.Civil_.GenerallyApplicableVersion.f-amend-24_03_20-1.pdf

COVID-19 ՀԱՄԱՃԱՐԱԿԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԱՐԴԱՐ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՄՇԱԿՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունքը երաշխավորված է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով, ինչպես նաև Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածով:

Իրավական համագործակցության եվրոպական հանձնաժողովը գտնում է, որ հատկապես քաղաքացիական և վարչական դատավարություններում դատարանների կողմից էլեկտրոնային ապացույցների ավելի լայն օգտագործումը, այդ թվում՝ տեսախցիկների միջոցով վկաների ցուցմունք վերցնելը, կարող է օգնել հաղթահարել «COVID-19» ճգնաժամի հետ կապված սահմանափակումները: Կոմիտեն խորհուրդ է տալիս այս հարցում հետևել Եվրոպայի նախարարների կոմիտեի կողմից ընդունված էլեկտրոնային ապացույցների օգտագործման վերաբերյալ ուղեցույցին[14]:

Արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողովն, անդրադառնալով դատական իշխանության քաղած դասերին և նրա առջև ծառացած մարտահրավերներին COVID-19 համավարակի ընթացքում, մատնանշել է, որ. «Համավարակի ժամանակ դատարանները փակելը կարող է անհրաժեշտ լինել՝ արդարադատության ոլորտի աշխատակիցների և դատարան դիմած անձանց առողջությունն ու անվտանգությունը պաշտպանելու նպատակով: Դա պետք է արվի զգուշորեն և համաչափորեն, քանի որ այն հանգեցնում է իրավունքի գերակայության հիմնարար սկզբունքի՝ արդարադատության մատչելիության կարևոր սահմանափակումների: Արդարադատության հանրային ծառայությունը, այդ թվում՝ արդարադատության մատչելիության ապահովումը, պետք է հնարավորինս պահպանվի այլընտրանքային միջոցներով, ինչպիսիք են առցանց ծառայությունները կամ դատարանների կայքերի և հաղորդակցության այլ միջոցների միջոցով տեղեկատվության հասանելիության ապահովումը (հեռախոս, էլեկտրոնային փոստ և այլն)»[15]:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, իր հերթին, արձանագրել է, որ տեսակապի և այլ միջոցների օգտագործումը հեռավար դատաքննություն անցկացնելու համար, ինքնին չի խախտում Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան, այնուամենայնիվ, ամբաստանյալը պետք է կարողանա առանց որևէ տեխնիկական խոչընդոտների հասկանալ, թե ինչ է կատարվում դատարանի դահլիճում, լսել և տեսնել դատական նիստի այլ մասնակիցներին[16]:

---

[14] https://rm.coe.int/guidelines-on-electronic-evidence-and-explanatory-memorandum/1680968ab5

[15] Մանրամասն տես՝ https://rm.coe.int/declaration-en-arm/16809ef80e:

[16] Մանրամասն տես՝ Case of Yevdokimov and others v. Russia, Applications nos. 27236/05, 16 February 2016, p. 43, https://hudoc.echr.coe.int/eng#{%22fulltext%22:[%22Yevdokimov%20and%20Others%22],%22documentcollectionid2%22:[%22GRANDCHAMBER%22,%22CHAMBER%22],%22itemid%22:[%22001-160620%22]}:

ՀԵՌԱՎԱՐ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԻՐԱՌ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Թեև ՀՀ դատավարական օրենսգրքերով սահմանված չէ դատարանից դուրս տեսաձայնային հեռահաղորդակցության միջոցների կիրառմամբ դատավարության անցկացման հնարավորությունը, այնուամենայնիվ, «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգի համաձայն՝ միայն քաղաքացիական գործերով դատարանները, հաշվի առնելով աշխարհում և Հայաստանի Հանրապետությունում նոր կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածման դեպքերը, Բարձրագույն դատական խորհրդի 24.03.2020թ. թիվ ԲԴԽ-12-Ո-25 որոշման ընդունման պահից մինչ 18.07.2020թ. իրականացրել են թվով 9 հեռավար /առցանց/ դատական նիստեր[17]:

Ինչ վերաբերում է վարչական դատարանին, ապա առկա են տարաբնույթ մեկնաբանություններ թե ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 145-րդ հոդվածի բովանդակային մեկնաբանման և թե դրա՝ օրենքի անալոգիայով վարչական դատավարության նկատմամբ կիրառման վերաբերյալ: Օրինակ, ՀՀ վարչական դատարանի դատավոր Կ. Զարիկյանի կողմից դատավարության մասնակցին առաջարկվել է ներկայացնել միջնորդություն տեսաձայնային հեռահաղորդակցության միջոցների կիրառմամբ նիստը անցկացնելու վերաբերյալ՝ հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 145-րդ հոդվածի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորումները (օրենքի անալոգիայի (համանմանության) կիրառումը)[18]: Դրան զուգահեռ, Բարձրագույն դատական խորհրդի անդամ, դատավոր Մ. Մակյանն, անդրադառնալով քրեական դատավարությունում հեռավար դատավարության իրականացմանը, մատնանշել է, որ ՀՀ օրենսդրությամբ նման հնարավորություն նախատեսված չէ, ավելին՝ նույնիսկ արգելված է[19]:

Հատկանշական է, որ ՀՀ դատարանների կողմից դատական նիստերը հեռավար եղանակով անցկացնելու հնարավորության հետ կապված հարցադրումների կապակցությամբ Դատական դեպարտամենտից տեղեկացրել են, որ ՀՀ բոլոր դատարաններն ապահովված են անհրաժեշտ տեխնիկական միջոցներով՝ դատական նիստերը տեսաձայնագրային հաղորդակցության միջոցներով իրականացնելու համար և յուրաքանչյուր դատարանի դատական նիստերի առնվազն մեկ դահլիճ կահավորված է համապատասխան սարքավորումներով, այդ թվում՝ ՀՀ վերաքննիչ քրեական և ՀՀ վերաքննիչ վարչական դատարանները, ինչպես նաև ՀՀ վարչական դատարանի կենտրոնական նստավայրը: Միաժամանակ, Դատական դեպարտամենտն անդրադառնալով բոլոր դատական նիստերը հեռավար անցկացնելու կապակցությամբ միջոցներ ձեռնարկելու հարցադրմանը, հայտնել է, որ դա չի բխում ՀՀ դատավարական օրենսգրքերի պահանջներից:

---

[17] Դատական նիստերը հեռավար եղանակով անցկացնելու վերաբերյալ դատական գործերին վերաբերող քանակական տվյալներ ներիկայացնելու հետ կապված հարցադրումների կապակցությամբ Դատական դեպարտամենտը տեղեկացրել է, որ համապատասխան վիճակագրություն կամ այլ հաշվառում չի վարվում:

[18] Վարչական գործ թիվ ՎԴ/0597/05/19:

[19] Մանրամասն տես՝ https://www.armtimes.com/hy/article/185044?fbclid=IwAR05ECYPI_9hHvczXi8z6LfZJW6akOCcYgChkMWsmFUcRHtormPdR6y9dUA

COVID-19 ՀԱՄԱՃԱՐԱԿԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԱՐԴԱՐ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

1. ՀՀ դատավարական օրենսգրքերով սահմանել էլեկտրոնային հավելվածների միջոցով Հայաստանի Հանրապետության բոլոր դատարաններում դատական նիստերը հեռավար/առցանց եղանակով իրականացնելու հնարավորություն, այդ թվում դատարանի նախաձեռնությամբ՝ նախատեսելով օրենսդրական անհրաժեշտ երաշխիքներ, այդ թվում անձի ինքնությունը պարզելու, վկայի հարցաքննության դեպքում վերջինիս կողմից իր պարտականությունների վերաբերյալ տեղեկացնելու և պատասխանատվության մասին զգուշացված լինելու փաստաթուղթը ստորագրելու մեխանիզմներ, նիստի ընթացքում կոնֆիդենցիալության պահպանման պայմաններում փաստաբանի հետ հեռահաղորդակցվելու, անազատության մեջ գտնվող ամբաստանյալների դեպքում՝ ազատազրկման վայրերից դատական նիստերին մասնակցելու հնարավորություններ և այլն:

2. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում սահմանել նաև մինչդատական փուլում քննչական և այլ դատավարական գործողությունների իրականացման հնարավորություն հեռավար/առցանց եղանակով՝ բացառությամբ այն գործողությունների, որոնց իրականացումը հեռավար կարգով անհնար է պայմանավորված իրենց բնույթով, օրինակ՝ քննչական փորձարարություն և այլն:

3. Մանրամասն կարգավորել դատավարության մասնակիցների կողմից դատական նիստի (քննչական/դատավարական գործողության) ընթացքում հնարավոր ապացույցներ/փաստաթղթեր էլեկտրոնային եղանակով ներկայացնելու, ինչպես նաև դրանց/գործի նյութերին ծանոթանալու կարգն ու պայմանները:

4. Ապահովել հանրության մասնակցությունը դատական նիստերին՝ դատարանի դահլիճում համավարակի կանխմամբ պայմանավորված անհրաժեշտ միջոցների սահմանման միջոցով (նվազագույն սոցիալական հեռավորություն, դիմակների պատշաճ կրման պահանջ, ջերմաչափում և այլն)[20] կամ հեռավար կարգով անցկացվող դատական նիստերը առցանց եղանակով հեռարձակելու միջոցով:

---

*Սույն ուսումնասիրությունը իրականացվել է Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամի կողմից Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի օժանդակության շնորհիվ՝ *«ՀՀ-ԵՄ միջև Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի իրականացման քաղաքացիական հասարակության համատեղ մշտադիտարկումն ու ջատագովությունը հանուն Հայաստանում վստահելի և համակարգային բարեփոխումների»* ծրագրի շրջանակներում: Ծրագիրը իրականացվում է Թբիլիսիում Նիդերլանդների թագավորության դեսպանության աջակցությամբ:

---

[20] Հատկապես, որ համավարակով պայմանավորված անվտանգության կանոնների պահպանման հարցի կապակցությամբ Դատական դեպարտամենտը տեղեկացրել է, որ Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելուց հետո ՀՀ դատարաններն ապահովվել են անհրաժեշտ պաշտպանիչ և ախտահանիչ միջոցներով, իրականացվել են վարչական շենքերի ախտահանման միջոցառումներ, որոնք կրում են շարունակական բնույթ: Նշվել է նաև, որ դատական նիստերի դահլիճում անվտանգության կանոնների պահպանումն իրականացվում է Պարետի՝ փակ տարածքների վերաբերյալ համապատասխան որոշումներով ամրագրված պահանջներին համապատասխան: